ConverseBank

«Converse4Women» ՓՄՁ ֆինանսավորման և բանկային ծառայությունների փաթեթ
Տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 09.10.2019թ.

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) գործարար կանանց (այսուհետ՝ Հաճախորդ) տրամադրում է ՓՄՁ ֆինանսավորման և բանկային ծառայությունների փաթեթ (այսուհետ՝ Փաթեթ) հետևյալ պայմաններով.

Գումար			1,000,000 – 150,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ		
Ժամկետ			Սկսնակ բիզնեսի համար	Գործող բիզնեսի համար	
			5 տարի	5 տարի	7 տարի
Նպատակ			Շրջանառու միջոցների համալրում, հիմնական միջոցների ձեռքբերում, կրեդիտորական պարտքի մարում		Հիմնական միջոցների ձեռքբերում, կրեդիտորական պարտքի մարում
Տարեկան տոկոսադրույքներն ըստ արժույթների և ժամկետների	**ՀՀ դրամ**	**Անվանական** Բանկի ռեսուրս	-	Առաջին 1 տարին՝ 11.5-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ[1]+5.25)%-ից (ԿԲԼՍ+11.75)% (լողացող)	Առաջին 1 տարին՝ 11.75-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ+5.5)%-ից (ԿԲԼՍ+11.75)% (լողացող)
		Անվանական Ծրագրային ռեսուրս	-	Ամբողջ ժամանակահատվածի համար՝ 11.5-18% (ֆիքսված)	Առաջին 5 տարին՝ 11.75-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ+5.5)%-ից (ԿԲԼՍ+11.75)% (լողացող)
		Արդյունավետ[2]	-	12.34-21.15%	12.75-20.82%
		Փաստացի[2]	-	12.37-34.57%	12.77-31.40%
	ԱՄՆ դոլար	**Անվանական**	Առաջին 1 տարին՝ 12-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ+9.5)%-ից (ԿԲԼՍ+15.5)% (լողացող)	Առաջին 1 տարին՝ 8.5-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ+6)%-ից (ԿԲԼՍ+15.5)% (լողացող)	Առաջին 1 տարին՝ 8.75-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ+6.25)%-ից (ԿԲԼՍ+15.5)% (լողացող)
		Արդյունավետ	13.15-21.15%	9.05-21.15%	9.44-20.82%
		Փաստացի	13.25-34.57%	9.07-34.57%	9.45-31.40%
	Եվրո	**Անվանական**	Առաջին 1 տարին՝ 10-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ+10.3)%-ից (ԿԲԼՍ+18.3)% (լողացող)	Առաջին 1 տարին՝ 6.75-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ+7.05)%-ից (ԿԲԼՍ+18.3)% (լողացող)	Առաջին 1 տարին՝ 7-18% (ֆիքսված), այնուհետև՝ (ԿԲԼՍ+7.3)%-ից (ԿԲԼՍ+18.3)% (լողացող)
		Արդյունավետ	10.92-21.15%	7.17-21.15%	7.55-20.82%
		Փաստացի	11.01-34.57%	7.19-34.57%	7.56-31.40%
Տրամադրման միանվագ վճար			Վարկի գումարի 1%, նվազագույնը՝ 25,000 ՀՀ դրամ	Վարկի գումարի 0.5%, նվազագույնը՝ 25,000 ՀՀ դրամ	Վարկի գումարի 1%, նվազագույնը՝ 25,000 ՀՀ դրամ
Հայտի ուսումնասիրության վճար			0 ՀՀ դրամ		

[1] **ԿԲԼՍ** - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Լողացող Տոկոսադրույք: Սահմանվում է Բանկի կողմից տարեկան երկու անգամ՝ հիմք ընդունելով հիմնական ցուցանիշները, իսկ վերջիններիս անհասանելիության դեպքում՝ երկրորդային ցուցանիշները: Փոփոխման դեպքում գործող պայմանագրերի անվանական տոկոսադրույքը փոփոխվում է ոչ շուտ, քան վարկառուին այդ մասին տեղեկացնելուց մեկ ամիս հետո:

Հիմնական ցուցանիշներ. ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ պետական 180-օրյա զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից https://www.cba.am ինտերնետային կայքում; ԱՄՆ դոլարի կամ եվրոյի դեպքում՝ համապատասխանաբար "ԱՄՆ դոլար 6-ամսյա ICE LIBOR" և "Եվրո 6-ամսյա ICE LIBOR" բենչմարկները, որոնք հրապարակվում են Intercontinental Exchange (ICE) (Ինտերկոնտինենտալ Էքսչենջ (ICE)) կազմակերպության կողմից https://www.theice.com ինտերնետային կայքում:

Երկրորդային ցուցանիշներ. ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը; ԱՄՆ դոլարի դեպքում՝ ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվ բանկի կողմից սահմանված Federal funds-ի տոկոսադրույքը կամ միջակայքի վերին շեմը; եվրոյի դեպքում՝ Եվրոպական կենտրոնական բանկի Marginal lending facility-ի տոկոսադրույքը:

Ընդ որում՝ հիմնական ցուցանիշների հասանելիության անհնարինության և երկրորդային ցուցանիշների կիրառման դեպքում երկրորդային ցուցանիշների հիման վրա սահմանված ԿԲԼՍ-ներով ֆինանսավորումների անվանական տոկոսադրույքները սահմանվում են այնպես, որ ֆինանսավորման տոկոսադրույքի հաստատուն բաղադրիչի փոփոխության պայմաններում անվանական տոկոսադրույքի մեծությունը մնա անփոփոխ:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել Բանկի հետ:
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից

Սահմանված ԿԲԼՏ տոկոսադրույքները հրապարակվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում https://conversebank.am/hy/kbht/ հասցեով և հասանելի են Բանկի տարածքում:

Հաշվարկված անվանական տոկոսադրույքի մեծությունը կլորացվում է մինչև մեկ հարյուրերորդական:

Այս վարկի լողացող տոկոսադրույքը Բանկի կողմից կարող է փոփոխվել ոչ ավելի հաճախ, քան տարին երկու անգամ:

[2] **Արդյունավետ տոկոսադրույքը** ներառում է միայն Բանկի կողմից սահմանված վճարները՝ վարկային հայտի ուսումնասիրության և վարկի տրամադրման վճարներ: Իսկ տարեկան **փաստացի տոկոսադրույքը** բացի Բանկի կողմից սահմանված վճարներից ներառում է վարկը ստանալու համար անհրաժեշտ այլ վճարները՝ գրավի գնահատման, միասնական տեղեկանքի, նոտարական և գրավի իրավունքի գրանցման վճարներ:

Արդյունավետ և փաստացի տոկոսադրույքները հաշվարկվել են հիմք ընդունելով ամփոփագրի թարմացման ամսաթվի դրությամբ գործող ԿԲԼՏ մեծությունը՝ ՀՀ դրամ՝ 6.25%, ԱՄՆ դոլար՝ 2.5%, Եվրո՝ -0.3%:

Սահմանափակումներ

Որպես շահառու կարող են հանդիսանալ՝

- Կին անհատ ձեռնարկատերերը
- Իրավաբանական անձինք, որոնց տնօրենը, առնվազն 50% բաժնետերը կամ իրական շահառուն (համաձայն Բանկի վարկային մասնագետի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների), ով հանդես է գալիս ուղղակի կամ անուղղակի մասնակցության եղանակով, կին է

«Converse4Woman» վարկառուները կարող են բանկային պրոդուկտներից օգտվել հետևյալ արտոնյալ պայմաններով.

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար.

Ծառայության տեսակ	Սակագին
Նոր ընթացիկ հաշվի/հաշիվների բացում և վարում	0 ՀՀ դրամ՝ հաշվի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար
Ընթացիկ հաշվին/հաշիվներին կանխիկ գումարի մուտքագրման դիմաց գանձվող միջնորդավճար	ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարային հաշիվներին՝ 0 ՀՀ դրամ Այլ արժույթներով՝ գործող սակագներից 50%-ով նվազեցված չափով
Ընթացիկ հաշվից/հաշիվներից կանխիկ գումարի ելքագրման դիմաց գանձվող միջնորդավճար	*Կանխիկ մուտքագրված միջոցների դեպքում՝* ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարային հաշիվներից՝ 0 ՀՀ դրամ Այլ արժույթներով՝ գործող սակագներից 50%-ով նվազեցված չափով *Անկանխիկ մուտքագրված միջոցների դեպքում՝* Գործող սակագներից 50%-ով նվազեցված չափով
Ընթացիկ հաշվի սպասարկում՝ ՀԾ «Ինտերնետ Բանկ» համակարգով	0 ՀՀ դրամ՝ հաշվի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար
POS տերմինալ/ներ/ով վճարային քարտերի սպասարկման միջնորդավճար՝ սպասարկման առաջին տարվա համար	ԱրՔա քարտերի համար՝ 0.8% ԱրՔա համակարգի անդամ բանկերի կողմից թողարկված քարտերի համար՝ 1% ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկերի կողմից թողարկված քարտերի համար՝ 2%
Մեկ կորպորատիվ քարտի սպասարկման վճար	0 ՀՀ դրամ՝ քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար

Անհատ ձեռնարկատեր, կազմակերպության տնօրեն, առնվազն 50% բաժնետեր/եր կամ իրական շահառու հանդիսացող՝ կին ֆիզիկական անձանց համար.

Ծառայության տեսակ	Սակագին
Խնայողական հաշվի բացում և վարում	0 ՀՀ դրամ՝ հաշվի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար
Վարկի գործողության ընթացքում մեկ Woman's Card վճարային քարտի տրամադրում և սպասարկում	0 ՀՀ դրամ՝ քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար
Վարկի գործողության ընթացքում մեկ Visa Classic կամ մեկ Visa Gold կամ մեկ Mastercard Gold վճարային քարտի տրամադրում և սպասարկում	Դիմելու պահին գործող սպասարկման միջնորդավճարի 50%-ով նվազեցված վճար՝ քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար
Այլ պայմաններ՝ համաձայն Բանկի համապատասխան ծառայության պայմանների:	

Առևտրի, սպասարկման, արտադրության, տուրիզմի և գյուղատնտեսության ոլորտում բիզնեսով զբաղվող գործարարներին կտրամադրվի նաև անվճար ֆինանսական խորհրդատվություն:

Վարկառուի կողմից իրականացվող վճարների ցանկ (գրավադրման դեպքում)

Գրավի առարկայի գնահատման ծախսեր	Անշարժ գույքի դեպքում՝ սկսած 18,000 ՀՀ դրամից Շարժական գույքի դեպքում՝ սկսած 10,000 ՀՀ դրամից
Գրավի իրավունքի գրանցում և սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք	2,000 - 37,000 ՀՀ դրամ
Նոտարական վավերացում	20,000 ՀՀ դրամ
Գրավադրվող գույքի ապահովագրություն	- Անշարժ գույք՝ 0.12 – 0.16 (պահանջի առկայության դեպքում) - Մարդատար մեքենա (Կասկո)՝ 2.5% (որպես տաքսի օգտագործվող՝ 6%) - Հատուկ նշանակության շարժական գույք՝ ըստ ապահովագրական ընկերության գնանշման

Տույժեր և տուգանքներ

Բանկի կողմից կարող են կիրառվել հետևյալ տույժերն ու տուգանքները.

1. **Ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարի դեպքում՝ ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար:**
   Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ տույժ/տուգանք, տոկոսագումար, մայր գումար:
2. **Վարկի տրամադրման համար սահմանված նախապայմաններից յուրաքանչյուրի խախտման դեպքում՝ վարկի գործող տոկոսադրույքի բարձրացում մինչև 4 տոկոսային կետով:**
3. **Գյուղատնտեսական նշանակության և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 ՀՀ դրամը/համարժեք արտարժույթը ներառյալ տրամադրված ֆինանսավորման դեպքում վաղաժամկետ մարման տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:**
4. **Մնացած դեպքերում՝ մինչև գործողության ժամկետի կեսը վարկի վաղաժամկետ մարման դեպքում կիրառվում է տուգանք վաղաժամկետ մարվող գումարի 5%-ի չափով:**

Մայր գումարի և տոկոսագումարների մարման հաճախականություն և եղանակ

Կատարվում է հետևյալ եղանակներից մեկով՝

1. **«Անուիտետային»** (հավասարաչափ ամսական մարում), որի մեջ փոփոխական մասերով մտնում են մայր գումարը և կուտակված տոկոսները:
2. **«Զսպանակաձև»** (նվազող ամսական մարում), որի մեջ մայր գումարի մարումը մտնում է հավասար չափով, իսկ կուտակված տոկոսները՝ փոփոխական:
3. **«Ճկուն»**, որի դեպքում վարկի մայր գումարի մարումներն իրականացվում են գործունեության առանձնահատկություններից ելնելով, իսկ տոկոսագումարները՝ ամսական:

Ապահովում

1. Շարժական և անշարժ գույքի, ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած նյութական և ոչ նյութական արժեքների գրավ, անհրաժեշտության դեպքում՝ նաև երաշխավորություն:
2. Առանց գրավ վարկերի դեպքում՝ ընկերության առնվազն 50 տոկոս ձայնի իրավունք ունեցող մասնակիցների և լրացուցիչ երկու երաշխավորություն:

Սկսնակ բիզնեսի դեպքում որպես ապահովվածության միջոց դիտարկվում է անշարժ գույքի գրավ, ընդ որում՝ վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրվող գույքի իրացվելի արժեքի 50 տոկոսը:

Վարկ/գրավ հարաբերակցություն

Մինչև գրավի գնահատված իրացվելի արժեքի 70%՝ կախված գրավադրվող գույքի տեսակից:

Ոսկյա իրերի գրավադրման դեպքում ֆինանսավորումն իրականացվում է մինչև գնահատված արժեքի 100%-ը:

Երաշխավորին ներկայացվող պահանջներ

Երաշխավորը՝

- պետք է ունենա կայուն հիմնավորված եկամուտ կամ սեփականության/համասեփականության իրավունքով պատկանող անշարժ և/կամ պետական գրանցման ենթակա շարժական գույք,
- վարկի տրամադրման պահին կարող է ունենալ առավելագույնը 3 գործող երաշխավորություն՝ տրամադրված այլ անձանց պարտավորությունների դիմաց, որոնց պարտավորությունները ժամկետանց չեն,
- վարկի տրամադրման պահին չպետք է ունենա խնդրահարույց, իսկ վերջին 12 ամիսների ընթացքում 30 և ավելի օր ժամկետանց պարտավորություններ,

Երաշխավորության վերաբերյալ բացատրական տեղեկատվություն

Եթե վարկառուն չկատարի իր պարտավորությունները, ապա երաշխավորն է վճարելու նրա փոխարեն, վատանալու է նաև երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է՝ երաշխավորը զրկվի իր սեփական գույքից:

Կոնվերս Բանկը՝

- Երաշխավորին կտրամադրի վարկային և երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ,
- Հաղորդակցումը կիրականացնի երաշխավորի կողմից ընտրված եղանակով,
- առնվազն 7 օր առաջ կծանուցի պայմանագրի պայմանների փոփոխության մասին,
- 1 օր առաջ կհիշեցնի առկա պարտավորության վերաբերյալ,
- Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո այդ մասին կտեղեկացնի երաշխավորին:

Երաշխավորն իրավունք ունի՝

- Ցանկացած ժամանակ Բանկից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին,
- Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Հետևյալ պայմաններով վարկի դեպքում՝

Վարկի գումար	5,000,000 ՀՀ դրամ
Անվանական տոկոսադրույք	11.5%
Մարման ժամկետ	5 տարի
Մարման տեսակ	Անուիտետային

Տոկոսագումարները կկազմեն՝

Ամսական մարում (մայր գումար + տոկոսագումար)	109,963
Ընդհանուր տոկոսագումար	1,597,782
Մարումների հանրագումար	6,597,782

Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է անվանական տոկոսադրույքի հիման վրա, որը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման ու սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ *հասցեում*:

Գրավի գնահատում

Գրավադրվող անշարժ և շարժական գույքը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերություններից որևէ մեկի կողմից: Գնահատող ընկերության ընտրությունը կատարվում է Հաճախորդի կողմից: Գնահատման հաշվետվությունը, որպես կանոն, վավեր է հաշվետվության տրման օրվանից 2 ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ գների փոփոխություն) կարող է պահանջվել լրացուցիչ գնահատում:

Ոսկու գրավադրման դեպքում գնահատումն իրականացվում է Բանկի աշխատակցի կողմից:

Առաջնային շուկայից ավտոմեքենայի, շինարարական և գյուղատնտեսական տեխնիկայի ու այլ սարքավորումների ձեռքբերման դեպքում որպես գնահատված շուկայական արժեք կարող է հիմք ընդունվել ձեռք բերման պայմանագրով կամ հաշիվ-ապրանքագրով սահմանված գումարը:

Գնահատող ընկերությունների ցանկ

Գնահատող ընկերություն	Հասցե	Հեռախոսահամար
«Ամինտաս Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Արցախի փող. 23/6, «Տուն Դեպո» համալիր	(010) 432 276, (094) 432 276, (096) 432 276
«Օլիվեր Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան 8, 215-216 սենյակ	(010) 542 740, (077) 542 750, (010) 542 760, (055) 542 750, (010) 542 770, (091) 542 750
«Վի Էմ - Ար Փի» ՍՊԸ	ք. Երևան,Վարդանանց փակուղի, 8/3 շենք, սեն.209	(010) 588 797, (099) 588 797
«ՏՏ Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Արշակունյաց 2ա, սեն. 111	(010) 545 175, (098) 015 059, (096) 015 059
«Ար Վի Էմ Քոնսալտ» ՍՊԸ	ք. Երևան, Նալբանդյան 48/1շ., 2-րդ հարկ	(010) 546 490, (077) 944 449, (098) 944 449, (093) 944 449
«Ափթայմ» ՍՊԸ	ք. Երևան Եկմալյան փող., 6 շենք, 3-րդ հարկ, սեն. 5 («Բիզնես Պալեի» շենք)	(060) 535 371, (094) 713 710, (098) 535 314
«Բիլդափ» ՍՊԸ	ք. Երևան Զաքյան փող., 5 շենք, թիվ 1 գրասենյակ	(010) 547 160, (091) 177 300

Գրավադրվող գույքի ապահովագրություն

Բանկը կարող է պահանջել գրավադրվող գույքի ապահովագրություն՝ ելնելով ֆինանսավորման նպատակից, գործարքից կամ գրավադրվող գույքի նկարագրից:

Ավտոտրանսպորտային միջոցների գրավադրման դեպքում կիրառվում է Կասկո ապահովագրություն:

Ապահովագրությունն իրականացվում է գնահատված շուկայական արժեքի չափով՝ ֆինանսավորման ամբողջ ժամանակահատվածի համար (եթե Բանկի որոշմամբ այլ բան նախատեսված չէ), Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերության կողմից:

Ապահովագրական ընկերությունների ցանկ

Ապահովագրական ընկերություն	Հասցե	Հեռախոսահամար
«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության փող., 51, 53, տարածքներ 47, 48, 50	(010) 592 121
«ՌԵՍՈ» ԱՓԲԸ	ք.Երևան, Կոմիտասի պող., 62 շենք	(060) 275 757, (098) 560 797
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1	(010) 591 010
«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 10 շենք, «Պիացցա Գրանդե» բիզնես կենտրոն, 110 տարածք	(010) 536 494, (060) 500 060

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Քաղվածքների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրում (ներառյալ ԱԱՀ)

- **Քաղվածքի տրամադրում մեկ անգամ (անկախ պարբերականությունից)՝** 0,
- **Կրկնօրինակի դեպքում՝**
  - Մինչև 1 ամիս վաղեմության ՝ 1,800 ՀՀ դրամ
  - Երկու ամսից մինչև 1 տարի վաղեմության ՝ 3,000 ՀՀ դրամ
  - Մեկ տարուց մինչև 3 տարի վաղեմության՝ 12,000 ՀՀ դրամ
  - 3 տարի և ավելի վաղեմության (Բանկում պահպանված լինելու դեպքում)՝ 24,000 ՀՀ դրամ

- **Տարբեր հաստատություններ ներկայացնելու համար տեղեկանք**[1]
  - Մեկ ամսվա ընթացքում բացված հաշիվների դեպքում[2]՝ 5,000 ՀՀ դրամ
  - Ավելի վաղ բացված հաշիվների դեպքում՝ 3,000 ՀՀ դրամ
- **Տեղեկանքներ/գրություններ**
  - ✓ *Կապարված գործարքների վերաբերյալ*
  - Մինչև մեկ ամսվա վաղեմություն ունեցող գործարքների համար՝ 3,000 ՀՀ դրամ
  - Մեկ ամսից ավելի վաղեմություն ունեցող գործարքների համար՝ 5,000 ՀՀ դրամ
  - ✓ *Բանկում գրավադրված գույքի՝ հաջորդող գրավի/օտարման համաձայնության վերաբերյալ գրություն՝* 6,000 ՀՀ դրամ՝ գրավադրված յուրաքանչյուր գույքի համար
- **Գործարքի կատարման հիմքեր, և այլ փաստաթղթերի պատճեններ (յուրաքանչյուր փաստաթղթի համար)**
  - Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող՝ 1,800 ՀՀ դրամ
  - Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող՝ 3,000 ՀՀ դրամ
  - Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող՝ 12,000 ՀՀ դրամ

Այլ ծառայությունների սակագներ (ներառյալ ԱԱՀ)

- **Քաղվածքների կամ այլ փաստաթղթերի փոստային առաքում**
  - ✓ *Ներհանրապետական և ԱՀ՝ 500 ՀՀ դրամ*
  - ✓ *Միջազգային*
  - Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին
  - Այլ դեպքերում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին + 1,500 ՀՀ դրամ
- **Քաղվածքների կամ այլ փաստաթղթերի՝ Պատվիրակված առաքման փոստային ծառայության միջոցով առաքում**
  - Ներհանրապետական և ԱՀ՝ 3,000 ՀՀ դրամ
  - Միջազգային՝ Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին + 3,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված անշարժ գույքի հասցեում անձանց հաշվառման նպատակով Բանկի համաձայնության տրամադրում (գանձվում է համաձայնության տրամադրման համար՝ անկախ գրանցվողների քանակից)՝** 3,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված անշարժ գույքի սեփականության վկայականի ժամանակավոր տրամադրում՝** 10,000 ՀՀ դրամ
- **Բանկում գրավադրված անշարժ գույքի սեփականության փաստաթղթերի փոփոխության համար համաձայնության տրամադրում**[3]**՝** 0.5%, նվազագույնը՝ 12,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 60,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված անշարժ գույքը վարձակալության հանձնելու թույլտվության տրամադրում՝** 12,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված ավտոմեքենայի հաշվառման համարանիշերի փոփոխման համաձայնության տրամադրում՝** 12,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված մեքենան վարձակալության հանձնելու թույլտվության տրամադրում՝** 8,000 ՀՀ դրամ
- **Գրավատուի կամ վարկառուի դիմումի հիման վրա գրավադրված գույքի մասնակի ազատում (բացառությամբ դրամական միջոցների և առարկայազուրկ մետաղական հաշիվների գրավադրման)՝** 20,000 ՀՀ դրամ (**ըստ յուրաքանչյուր գույքի**)
- **Վարկի պայմանների վերանայում**[4]՝ 0.5%, նվազագույնը՝ 6,000 ՀՀ դրամ

[1]Նույն հաճախորդին տեղեկանքի և քաղվածքի միաժամանակյա տրամադրման և տեղեկանքի դիմաց գանձում նախատեսված լինելու դեպքում գանձումը կատարվում է միայն տեղեկանքի դիմաց:
[2]Մեկից ավելի գործող հաշիվ ունենալու պարագայում դիտարկվում է ավելի վաղ բացված հաշվի բացման ամսաթիվը՝ անկախ տեղեկանքում ներառվելու փաստից:
[3] Սակագնի հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով գրավի սկզբնական գնահատված արժեքը:
[4] Սակագնի հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով տրամադրված վարկի գումարը: Նախատեսված սակագները գանձվում են հաճախորդի կողմից վարկի պայմանների վերանայման դիմումը ներկայացնելու պահին:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- Վարկային հայտ-հարցաթերթիկ
- ԱՔՌԱ հարցման, երաշխավորության համաձայնություններ
- Հայտատու ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ, իրավաբանական անձի գործադիր մարմնի, լիազորված անձի, մասնակցի, իրական շահառուի, գրավատուի, երաշխավորի անձը հաստատող փաստաթուղթ (իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ հիմնադիր փաստաթղթեր), հանրային ծառայությունների

համարանիշ կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (չի պահանջվում, եթե ներկայացվում է նույնականացման քարտ)

- Կանոնադրություն, պետական գրանցման վկայական բոլոր ներդիրներով և ՀՎՀՀ
- Բաց բաժնետիրական ընկերության դեպքում՝ տեղեկանք դեպոզիտարիայից բաժնետերերի վերաբերյալ
- Որպես գրավ առաջարկվող միջոցների սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ, ձեռքբերման հիմք և սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթուղթ
- Վերջին մեկ տարվա հարկային հաշվետվություններ
- Տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ
- Գործունեության ծավալման վայրի սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր, կամ հաճախորդի գործունեության վայրի նկատմամբ իրավունքը հաստատող այլ հիմք (օրինակ՝ տեղեկանք գյուղապետարանից)
- Առաջարկվող գրավի գնահատման (վերագնահատման) նախնական և հիմնական (վարկի հաստատումից հետո) հաշվետվություն կամ արժեքի որոշման հիմք
- Ընդհանուր ժողովի կամ միակ մասնակցի որոշման արձանագրության քաղվածք՝ ֆինանսավորում ստանալու, գույքի գրավադրման, երաշխավորության տրամադրման վերաբերյալ
- Գրավի ապահովագրության վկայագրեր (ապահովագրության պահանջի դեպքում՝ վարկի հաստատումից հետո)
- Տեղեկանք սահմանափակումների վերաբերյալ (վարկի հաստատումից հետո)
- Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

Ուշադրություն
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված կարող է փոխվել տարեկան փաստացի տոկոսադրույքը և վարկի մարումների մեծությունը:
Հաշվարկներում հիմք են ընդունվել 08.10.2019թ. Կենտրոնական բանկի կողմից հայտարարված՝ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները՝ USD - 476.6, EUR - 523.69:
Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ տվյալները կտրամադրվեն վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Վատ վարկային պատմություն ունենալը հետագայում կարող է խոչընդոտել վարկի ստացման հարցում: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ստանալ Ձեր վարկային պատմության զեկույցը:
Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե Դուք ժամանակին չկատարեք Ձեր տոկոսագումարների և վարկի գումարի մարումները:
Գրավի իրացումից ստացված գումարը Ձեր վարկային պարտավորությունները մարելու համար բավարար չլինելու դեպքում, դրանք կարող են մարվել Ձեր և/կամ երաշխավորի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Բանկը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին:
Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ կառավարության հետ կնքած համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
Բանկն իրավասու է փոփոխել և լրացնել մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագները՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին հաճախորդներին՝ սեփական ինտերնետային էջում (www.conversebank.am) հաղորդագրություն հրապարակելով, Բանկի տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, փոստով ծանուցումն առաքելու միջոցով և հաճախորդի կողմից ընտրված Բանկի կողմից առաջարկվող այլ եղանակներով տրամադրելու միջոցով, որը համարվում է Հաճախորդի պատշաճ իրազեկում:
Եթե հայցվող վարկային միջոցները տրամադրվելու են նաև կամ բացառապես Ձեր՝ այլ կազմակերպություններում (բանկեր, վարկային կազմակերպություններ և այլն) գտնվող վարկային պարտավորությունների վերաֆինանսավորման նպատակով, ապա սույնով զգուշացնում ենք, որ Դուք պարտավոր եք մարել վերաֆինանսավորումից հետո այդ կազմակերպություններում չմարված տոկոսագումարները, տուժանքը, սպասարկման և այլ վճարները ինքնուրույն, որոնց չկատարման դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:

Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Հայտատուն համապատասխանում է տվյալ վարկի տրամադրման պայմաններին և սահմանափակող դրույթներին,
- Հայտատուն Բանկի պահանջով իր վարկային պարտավորությունն ապահովում է գրավով և/կամ երաշխավորությամբ,
- Հայտատուն գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ,
- Հայտատուի ներկայացրած փաստաթղթերն արժանահավատ են և ներառում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները,
- Հայտատուի վարկային պատմությունը դրական է կամ բացակայում է:

Հայտատուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ պահանջներին չհամապատասխանելը, կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը:

Վարկի տրամադրման որոշման մասին տեղեկացնելու և վարկը տրամադրելու ժամկետները

Որոշման կայացումը տևում է առավելագույնը 10 բանկային օր, Հաճախորդը տեղեկացվում է մեկօրյա ժամկետում, Վարկը տրամադրվում է 10 բանկային օրվա ընթացքում:

Վարկի ձևակերպման վայրը և տրամադրման եղանակը

Վարկը տրամադրվում է Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում:

Վարկի գումարը տրամադրվում է վարկառուին՝ հաշվին մուտքագրման եղանակով:

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

Կապ Բանկի հետ

Մանրամասների և հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի https://www.conversebank.am ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Viber ՝ +374 95 511211
- Skype ՝ conversebank-callcenter